

ԳՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
PRICE STATISTICS METHODOLOGY

ԳՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
PRICE STATISTICS METHODOLOGY

Գների վիճակագրության ցուցանիշների համակարգն իրենից ներկայացնում է փոխկապակցված և փոխլրացնող ցուցանիշների համախումբ, որոնք բնութագրում են ինչպես գների (սակագների) փաստացի մակարդակը, այնպես էլ դրանց տոկոսային փոփոխությունները:

Բաժնում ներկայացված են տնտեսության սպառողական և իրական հատվածներում ամբողջությամբ, ու ըստ առանձին սեգմենտների (հատվածների) գների (սակագների) շարժի, ինչպես նաև կարևորագույն արտադրանքի, ապրանքների և ծառայությունների գների (սակագների) միջին մակարդակի վերաբերյալ տվյալներ:

Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) բնութագրում է բնակչության անձնական սպառման համար ձեռք բերված ապրանքների և ծառայությունների փաստացի հաստատագրված կազմի արժեքի փոփոխությունը ժամանակի և տարածության մեջ:

Հայաստանի Հանրապետությունում սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար Երևան քաղաքում և հանրապետության 10 մարզերում սահմանված մեթոդաբանությամբ կատարվում է սպառողական գների (սակագների) ամենամսյա դիտարկում:

Ըստ մարզերի գների դիտարկումը կատարվում է հետևյալ բնակավայրերում.

- Արագածոտնի մարզ (ք. Աշտարակ)
- Արմավիրի մարզ (ք. Վաղարշապատ)
- Գեղարքունիքի մարզ (ք. Գավառ)
- Լոռու մարզ (ք. Վանաձոր)
- Կոտայքի մարզ (ք. Հրազդան)
- Շիրակի մարզ (ք. Գյումրի)
- Սյունքի մարզ (ք. Կապան)
- Վայոց ձորի մարզ (ք. Եղեգնաձոր)
- Տավուշի մարզ (ք. Իջևան)
- Արարատի մարզ (ք. Արտաշատ):

Սահմանված է գների դիտարկման հետևյալ կարգը.

Յուրաքանչյուր հետազոտվող բնակավայրում, ամեն ամիս, կատարվում է 470 անվանում (սկսած 2015թ. 1 094 ներկայացուցիչներ) սպառողական ապրանքների գների և ծառայությունների սակագների դիտարկում (գները դիտարկվում են յուրաքանչյուր ամսվա համար 3 անգամ՝ տվյալ ամսվա 1-ին, 10-ին և 20-ին և դրանց մոտակա օրերին): Յուրաքանչյուր ապրանքատեսակի կամ ծառայության համար հետազոտվում է 9-12

The system of indicators related to price statistics represents a set of interrelated and complementary indicators describing actual price levels as well as their percentage change.

In section the data on dynamics of prices (tariffs) in consumer and real sectors of economy as a whole and in separate segments, and also on average level of prices (tariffs) of the most important kinds of production, goods and services are represented.

Consumer price index (CPI) measures changes both over the time and the space in the value of actual fixed quantity of the goods purchased for population's personal use and services. In the Republic of Armenia, for the calculation of consumer price index, monthly consumer price (tariff) monitoring is conducted according to the determined methodology in Yerevan city and 10 marzes (regions) of the republic

Price monitoring by marzes is conducted in the following settlements:

- Aragatsotn (Ashtarak)
- Armavir (Vagharshapat)
- Gegharkunik (Gavar)
- Lori (Vanadzor)
- Kotayk (Hrazdan)
- Shirak (Gyumri)
- Syunik (Kapan)
- Vayots Dzor (Yeghegnadzor)
- Tavush (Ijevan)
- Ararat (Artashat)

The following order has been established for price monitoring:

Monitoring of prices of consumer goods and tariffs for services conducted every month in every observed settlement (prices are monitored three times for each month, on 1st, 10th, and 20th days and the nearer days of the reference month) for each 470 (since from 2015 -1 094 representatives) commodity item or service observing 9-12 trade

ԳՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
PRICE STATISTICS METHODOLOGY

առևտրի (ծառայության) կետ: Միայն սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար յուրաքանչյուր ամիս, յուրաքանչյուր բնակավայրում ամեն մի ապրանքատեսակի համար կատարվում է մինչև 36 գնային դիտարկում:

Գրանցված գների հիման վրա կատարվում է միջին ամսական գների հաշվարկ՝ ըստ ապրանքատեսակների և ըստ դիտարկվող բնակավայրերի: Դիտարկված տվյալների հիման վրա հաշվում են միջին գներ տվյալ տարածաշրջանի յուրաքանչյուր ապրանքատեսակի (ծառայության) համար և 10-օրյա ու ամսական կտրվածքով ներկայացվում ՀՀ ԱՎԾ գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին, որտեղ մշակված մեթոդաբանության համաձայն, հաշվարկվում է սպառողական գների ինդեքս: Սպառողական գների ինդեքսը հաշվարկվում է Լասպեյրեսի բանաձևով, բազիսային անփոփոխ կշռվածությամբ, այսինքն հաշվարկվում է զուտ գնային ինդեքս:

Հանրապետությունում միջին գների մակարդակը, ինչպես նաև գների ինդեքսը որոշվում է որպես առանձին մարզերի գների մակարդակների, կամ գների ինդեքսների, միջին կշռված մեծություն:

Հետազոտության մեջ ընդգրկված մարզերի և Երևան քաղաքի հանրապետության մեջ ունեցած տեսակարար կշիռները հաշվարկվում են բնակչության թվաքանակի, ընդհանուր ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալներում դրանց տեսակարար կշիռների հիման վրա:

Տնային տնտեսությունների կողմից կատարված դրամական ծախսերի կառուցվածքի հիման վրա կատարվել է սպառողական ապրանքների և ծառայությունների ներկայացուցչական ընտրանք՝ սպառողական զամբյուղի ստեղծման, կշիռների հաշվարկման համար:

Սպառման կառուցվածքում կատարվող էական տեղաշարժերի արտացոլմամբ պայմանավորված, պարբերաբար իրականացվում է նաև սպառողական գների ինդեքսի համար օգտագործվող սպառողական զամբյուղում ներառված ապրանքների (ծառայությունների) տեսակների կշիռների վերահաշվարկ՝ հիմք ընդունելով տնային տնտեսությունների կենսապայմանների հետազոտությունների տվյալները:

(service) outlets, i.e. for calculation of consumer price index only, up to 36 prices for each commodity item are monitored every month, in every settlement.

Average monthly prices are calculated by products and by observed settlements on the basis of registered prices. Average prices for each product (service) in the given region are calculated based on the recorded prices and are submitted on the 10day or monthly basis to the Price Statistics and International Comparison Division, NSS RA, where consumer price index is calculated according to the methodology developed jointly with IMF experts. Laspeyres formula with fixed weights is used to calculate consumer price index, i.e. net price index is computed.

The level of average prices on price index in the republic is determined as weighted average of price levels or price indexes of selected marzes.

Specific weights of marzes covered by the survey and Yerevan city in the republic are computed based on their weights in the volumes of population number, total goods turnover and services rendered to the population.

Representative sampling of consumer goods and services has been designed based on the expenditure structure made by households for making the consumer basket and computing weights.

Given by the significant changes in the expenditure structure, weights of representative goods (service) included in the consumer basket used for the consumer price index were periodically recalculated taking as a base the Living Standards Households Survey data.

Taking into consideration the international experience on CPI calculation, where the priority

ԳՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
PRICE STATISTICS METHODOLOGY

Հաշվի առնելով ՍԳԻ-ի հաշվարկման միջազգային փորձը, որտեղ ներկայում առաջնայնությունը տրվում է ՍԳԻ-ի զամբյուղի տեսակարար կշիռների առավել հաճախակի վերանայմանը (առավել ընդունելի տարբերակ է համարվում ամեն տարի կշիռների վերանայումը, եթե տվյալ երկիրն ունի այդպիսի հնարավորություն (կշիռների հաշվարկների համար անհրաժեշտ տեղեկատվության հասանելիության և օպերատիվության առումով)), ինչպես նաև Եվրամիության փորձագետների առաջարկներն ու խորհրդատվությունը, ՀՀ-ում ՍԳԻ-ի հաշվարկման համար կշիռների վերանայումն այսուհետ իրականացվելու է ամեն տարի՝ բազիսային ժամանակաշրջան ընդունելով նախորդ տարվա դեկտեմբեր ամիսը:

2016 թվականի հունվարից սկսած ՍԳԻ-ի հաշվարկման համար բազիսային ժամանակաշրջան է ընդունվում 2015 թվականի դեկտեմբեր ամիսը: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված (ընտրանքային) հետազոտության արդյունքները և 2015թ. հունվարից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում յուրաքանչյուր ապրանք-ծառայության գնային փոփոխությունները, կատարվել է սպառողական զամբյուղում ընդգրկված ապրանք (ծառայություն)-ներկայացուցիչների տեսակարար կշիռների վերահաշվարկ: ՍԳԻ-ի հաշվարկման համար դիտարկվող ապրանք-ծառայությունների ընդհանուր քանակը մնացել է անփոփոխ՝ 470, սակայն ապրանք (ծառայություն)-ներկայացուցիչների թվակազմն արդիականացվել և ավելացվել է, կազմելով 1 094 միավոր՝ 2011 թվականից դիտարկվող 901-ի փոխարեն:

Միաժամանակ, կատարվել է ՀՀ հետազոտվող 10 բնակավայրերի (ըստ մարզերի) և Երևան քաղաքի տեսակարար կշիռների վերահաշվարկ հիմք ընդունելով մշտական բնակչության թվաքանակը, ապրանքաշրջանառության և ծառայությունների ծավալների մասին 2015 թվականին փաստագրված տարածաշրջանային ցուցանիշները:

ՍԳԻ-ն հաշվարկվում է տարբեր ժամանակահատվածների՝ հաշվետու ամիսը բազիսային ժամանակահատվածի, նախորդ ամսվա, նախորդ տարվա դեկտեմբերի, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի, նախորդ տարվա համապատասխան

is given to more frequent revision of CPI basket weights (the most acceptable option is the revision of weights every year, if the country has such an opportunity (in terms of access and timeliness of the information necessary for the weights' calculations)), as well as recommendations of EU experts, in RA the revision of the weights for CPI calculation will be carried out every year taking as a base period the December of the previous year.

Since January 2016 the base period for CPI calculation is considered December 2015. Taking into accounts the results of Integrated Living Conditions Survey (sample) carried out in the Republic of Armenia in 2015 and price changes for each good and service during the period from January to December of 2015, the recalculation of weights of representative goods and services included in the consumer basket was implemented. The total number of the observed goods and services for CPI calculation remained unchanged - 470, but the content of the representative goods and services was updated and added, comprising 1 094 units instead of 901 observed since 2011.

At the same time, the recalculation of the weights for 10 settlements (by marzes) observed in RA and Yerevan city based on de-jure population number and regional indicators on the volumes of goods turnover and services for 2015 was conducted.

Consumer Price Index in the Republic of Armenia is computed in comparison with different periods: current month to previous month; December of the previous year; corresponding period of the previous year; corresponding month of the

ԳՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
PRICE STATISTICS METODOLOGY

ամսվա նկատմամբ:

ՀՀ արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսը (ԱԱԳԻ) բնութագրում է արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի գների փոփոխությունը ժամանակի ընթացքում՝ առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի հաշվարկման:

Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը նպատակաուղղված է արդյունաբերության ոլորտի¹ կազմակերպությունների թողարկած արտադրանքի գների մակարդակի և փոփոխության վիճակագրական դիտարկման ապահովմանը:

Արդյունաբերական արտադրանքի գների փոփոխության դիտարկումն իրականացվում է ընտրանքային կարգով ընտրված արդյունաբերության ոլորտի բազային կազմակերպությունների տվյալների հիման վրա: Հետազոտման համար ընտրվում են տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի (ՏԳՏՀԴ) (խմբագրություն 2) հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման, մշակող արդյունաբերության, էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման, ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակման բաժիններին համապատասխան գործունեություն ծավալող առավել բնորոշ կազմակերպությունները: Արդյունաբերական կազմակերպությունների ընտրանքն իրականացվում է կշիռների նորացման (թարմացման) հետ միաժամանակ՝ 3-5 տարին մեկ անգամ: ՀՀ արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի հաշվարկն իրականացվում է «Հայաստանի Հանրապետության արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի հաշվարկման կարգին» (հաստատված ՀՀ ՎՊԽ 2009թ. դեկտեմբերի 23-ի թիվ 49-Ա որոշմամբ) համապատասխան: Ինդեքսների հաշվարկն իրականացվում է Լասպեյրեսի բանաձևով՝ ամսական պարբերականությամբ, համաձայն Արտադրանքի դասակարգչի ըստ գործունեության տեսակների (ԱԴԳՏ)՝ արտադրանք և ըստ ՏԳՏՀԴ՝ դաս, խումբ, հատված, ենթաբաժին, բաժին և ընդամենը՝ ՀՀ ագրեգացման մակարդակների:

previous year and the base year.

Producer's price index for industrial product (PPI) measures price changes over time for the product produced by the industrial organizations, excluding value added tax and excise tax.

The calculation methodology for producer's price index for industrial product aims to ensure the statistical observation of the industrial organization products' price level and changes.

Monitoring of the change in prices for industrial product is based on data of the basic industrial organizations covered by the sample. Organizations having activities that are in line with the Armenian Classification of Economic Activities (ACEA) (Revision2) sectors mining and quarrying, manufacturing, electricity, gas, steam and air conditioning supply, water supply, sewerage, wastes management and manufacturing are selected for the survey. Sample of the industrial organizations is designed every 3-5 years together with the weights updates. The calculation of RA producer's price index for industrial product is made according to the "Calculation Order for RA Producer's Price Index for Industrial Product" (approved by the Resolution No 49-A dated 23 December 2009 of RA State Council on Statistics). Indexes are calculated by the Laspeyres formula on a monthly basis, in accordance with the level of product of the Classification of Products by Activities (CPA) and levels of class, group, sector, subdivision and division in total, RA aggregation level of the Armenian Classification of Economic Activities.

¹ Ներառում է ՏԳՏՀԴ-ի (Խմբ. 2) B, C, D, E բաժինները:
Includes division B, C, D, E of the Armenian classification of economic activities (Rev.2).

ԳՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
PRICE STATISTICS METHODOLOGY

Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսը հաշվարկվում է յուրաքանչյուր ամիսը նախորդ ամսվա նկատմամբ, բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ, նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, ընթացիկ ժամանակաշրջանը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական կարգով) և եռամսյակային ինդեքսներ:

Բեռնափոխադրումների սակագների ինդեքսը բնութագրում է տրանսպորտի տարբեր տեսակներով բեռնափոխադրումների սակագների փոփոխությունները ժամանակի ընթացքում: Ագրեգացվում է հանրապետությունում գործող 4 տեսակի՝ ավտոմոբիլային, երկաթուղային, օդային, խողովակաշարային բեռնափոխադրումների սակագների հաշվարկված ինդեքսների միջոցով, որը որոշում է տրանսպորտի առանձին տեսակներով բեռնափոխադրումների սակագների շարժն ընթացիկ ժամանակահատվածում բազիսայինի համեմատ՝ առանց հաշվի առնելու տեղափոխվող բեռների կառուցվածքային փոփոխությունների հետ կապված հանգամանքները (բեռի տեսակը, փոխադրման չափը, տեղ հասցնելու արագությունը և այլն): Տրանսպորտի յուրաքանչյուր տեսակի գծով (ավտոմոբիլային, երկաթուղային, օդային, խողովակաշարային) գրանցվում է ծառայություն ներկայացուցչի բեռնափոխադրման սակագինը, ինչով պայմանավորվում է տրանսպորտի կոնկրետ տեսակով առավել հաճախ փոխադրվող մեկ միավոր բեռի (տոննա, խորանարդ մետր) առաքումը փաստացի տարածության վրա (որոշակի երթուղով): Որպես կշռման բազա ընդունվում են որոշակի բազիսային ժամանակահատվածում (հիմնականում նախորդ տարում) բեռների տեղափոխման ծառայությունների դիմաց տրանսպորտային կազմակերպությունների կողմից ներկայացված եկամուտների մասին տվյալները:

Բեռնափոխադրումների սակագների ինդեքսի հաշվարկներն իրականացվում են Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչին (ՏԳՏՀԴ) համապատասխան:

Շինարարության գների ինդեքսը¹ հաշվարկվում է ըստ շինարարության տեխնոլոգիական կառուցվածքային բաղադրամասերի (շինմոնտաժային աշխատանքների, մեքենասարքավորումների ներդրումների, այլ աշխատանքների և ծախսերի)՝ կշռված ընդհանուր ծավալում դրանց բաժնեմասով:

Producer's price index for industrial product is calculated: every month in comparison with the previous month; base period; corresponding month of the previous year; December of the previous year; recording period in comparison with the relevant period of the previous year (on a cumulative basis) and quarterly indexes.

Freight tariff index measures changes in tariffs for freights by several kinds of transport over time. It is aggregated through the tariff indexes calculated for freight transportation by the 4 kind of transport operating in the republic road, railway, air and pipeline. It determines the dynamics of freight transportation tariffs by certain types of transport in the current period in comparison with the base period, irrespective of the changes in the structure of transported cargo (type of cargo, size of delivery, speed of delivery, etc.). Tariffs for representative services which determine delivery per unit (tons, cubic meters) of the most often transported goods for an actual distance (defined route) are registered for all types of transport (road, railway, air and pipeline). Data on revenues of transport enterprises from rendering of services in freight transportation during a defined base year (mainly in previous year) are used as a weighting base.

The calculation of freight tariff index is done according to the Armenia version of NACE.

Construction price index¹ is calculated by aggregation of price indexes of technological structural components of construction (construction and assembly work, capital investment in machinery and equipment, other operations and costs), weighted upon their shares in total volume.

ԳՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
PRICE STATISTICS METODOLOGY

Շինմոնտաժային աշխատանքների գների ինդեքս¹ հիմքում ընկած են հանրապետությունում ընտրանքային ցանցի բազային շինարարական կազմակերպությունների նյութերի, դետալների ու շինարարական այլ տարրերի գրանցված արժեքները, աշխատողների աշխատավարձը: Հաշվարկը կատարվում է հատուկ մշակված տեխնոլոգիական մոդելներով, որոնք իրենցից ներկայացնում են շինմոնտաժային աշխատանքների ծախսերը բնութագրող նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների ցանկ:

Գյուղմթերք արտադրողների իրացման գների ինդեքս արտահայտում է գյուղատնտեսական մթերք արտադրողի տարբեր ուղղություններով իրացված մթերքի գների փոփոխությունները ժամանակի, ինչպես նաև տարածության մեջ: Այն հաշվարկվում է Հայաստանի Հանրապետությունում 7 440 գյուղացիական տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքի գների ինդեքսների ագրեգացման միջոցով, ըստ բուսաբուծական և անասնաբուծական մթերքի և ըստ հանրապետության մարզերի: Դրանցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է առանձին ապրանքատեսակների ինդեքսների կըշռված մեծություն, ընդգրկված միատեսակ ապրանքախմբում: Որպես անհատական ինդեքսների կշռման բազա օգտագործվում է հաշվետու ամսում իրացված արտադրանքի ծավալը:

Գյուղատնտեսական արտադրության միջոցների գնման գների ինդեքս բնութագրում է արտադրության միջոցների գնման գների փոփոխությունների շարժը հաշվետու ժամանակահատվածում բազիսայինի համեմատ: Հաշվարկվում է 7 440 գյուղացիական տնտեսությունների կողմից ձեռք բերված 92 անվանում արտադրության միջոցների գնման գների հետազոտման տվյալների հիման վրա:

Արտաքին առևտրի գների (միավորի արժեքի) ինդեքս բնութագրում է արտաքին առևտրի ապրանքների գների փոփոխման հաշվին արտահանման և

Assembly work price index¹ is based on the registered values on materials, parts and other construction components, wages of employees of the base construction organizations in the sampling net of the republic. The calculation is made by the specially developed models, which are the list of material, labour and financial resources characterizing the costs of construction and assembly work.

Sale price indexes of agricultural product producer measures price changes for the products sold through all channels of the agricultural product producer both over time and space. It is calculated through the aggregation method of prices for 61 named agricultural products sold by the 7 440 peasant farms, by the plant growing and cattle breeding products and marzes of the republic. Each of them represents the weighted value of indexes for the certain types of commodity, which are included in homogeneous commodity group.

Procurement price index for agricultural production means characterizes dynamics of change in procurement prices for production means in the reference period compared to the base one. It is calculated based on the survey results on procurement prices for 92 named production means acquired by the 7 440 peasant farms.

Foreign trade price (unit value) index measures change in export and import value at the expense of change trade in goods under the conditions of

¹ Շինարարության և շինմոնտաժային աշխատանքների շրջայական և երկարաժամկետ ինդեքսները ՀՀ-ում հաշվարկվում է ՀՀ ֆինանսների նախարարության Գների ուսումնասիրության և վերլուծության գործակալության կողմից ներկայացված ինդեքսների հիման վրա:

The chain and long-term price indexes for construction and assembly work in RA has been calculated by the based on the indexes provided by Acting Head of Prices and Analysis Agency of the Ministry of Finance of RA.

ԳՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
PRICE STATISTICS METODOLOGY

ներմուծման արժեքի փոփոխությունը անփոփոխ, հաստատուն ֆիզիկական ծավալի պայմաններում: Արտաքին առևտրի գների կամ միավորի արժեքի ինդեքսների հաշվարկի համար որպես տվյալների սկզբնական աղբյուր հիմք են հանդիսանում ներմուծման, արտահանման բեռնամաքսային հայտարարագրերը: Հաշվարկներին մասնակցող ընտրված ապրանքներին են վերաբերվում այն բոլոր միատարր ապրանքատեսակները, որոնք ծածկագրված են ըստ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳԱԱ) դասակարգչի ութանիշ ծածկագրերի, դասակարգված են

- ըստ ապրանքային ենթախմբերի,
- ըստ ապրանքային խմբերի,
- ըստ ապրանքային բաժինների,

ունեն ապրանքի քանակի և արժեքի մասին տվյալներ, պարունակում են տեղեկատվություն տվյալ ապրանքն արտահանող կամ ներմուծող երկրի մասին:

Արտաքին առևտրի գների ինդեքսների հաշվարկը տարվում է 4 ուղղություններով՝

- «Ըստ բոլոր երկրների»,
- «Ըստ ԱՊՀ երկրների»,
- «Ըստ ոչ ԱՊՀ երկրների», այդ թվում
- «Ըստ Եվրամիության երկրների»:

Արտաքին առևտրի գների ինդեքսի հաշվարկի համար կիրառվում է Լասպեյրեսի միջին արժեքի ինդեքսի բանաձևը: Բազիսային ժամանակաշրջանն ընդունվում է նախորդ տարին:

ՀՀ-ում արտաքին առևտրի գների ինդեքսը հաշվարկվում է ամսական պարբերականությամբ: «Ըստ ԱՊՀ երկրների», «Ըստ ոչ ԱՊՀ երկրների» և «Ըստ Եվրամիության երկրների» ուղղություններում ինչպես ընթացիկ ամսվա, այնպես էլ բազիսային տարվա համար հաշվարկվում է առանձին ապրանքատեսակների ներմուծման (արտահանման) միջին արժեքը (զինը):

$$\bar{P}_i = \frac{V_i}{Q_i}$$

որտեղ՝
 Pi- i-րդ ապրանքատեսակի միջին արժեքն է,
 V-i-րդ ապրանքատեսակի ծավալն է գումարային արտահայտությամբ,
 Q-i-րդ ապրանքատեսակի քանակն է:

Օգտագործելով տոկոսային փոփոխությունների փոխկապակցման (ագրեգացման) եղանակը, ապրանքային ենթախմբերի ինդեքսների հիման վրա՝

Գները և գների ինդեքսները
Հայաստանի Հանրապետությունում 2012-2016թթ
Prices and price indexes in the
Republic of Armenia in 2012-2016

unchangeable, fixed physical volume. Customs records on import and serve as an original source of data for calculation of foreign trade price index or unit value index. All the homogeneous goods are used for the calculations, which are coded according to the 8 digit codes of the Classification “Commodity Nomenclature of Foreign Economic Activities”

- classified by:
- commodity subgroups,
- commodity groups,
- commodity divisions,

include data on quantity and value of commodity, include information on country exporting or importing the given goods

Foreign trade price index is calculated in 4 directions:

- “by all countries”,
- “by CIS countries”,
- “by nonCIS countries”, of which
- “by EU countries”.

Laspeyres average value index formula is used for calculation of the foreign trade price index. Previous year is taken as a base year.

In Armenia foreign trade price index is calculated on the monthly basis.

In the directions “by CIS countries”, “by non CIS countries” and “by EU countries”, the average value (price) of import (export) of separate commodity items is calculated for both current month and base year.

$$\bar{P}_i = \frac{V_i}{Q_i}$$

where
 Pi- average value of the ith commodity item,
 Vi - volume of the ith commodity item,
 Qi- quantity of the ith commodity item.

Using the recent changes aggregation method, average value indexes of commodity groups and division, as well as import and export price

ԳՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
PRICE STATISTICS METODOLOGY

հաշվարկվում են ապրանքային խմբերի, բաժինների միջին արժեքների ինդեքսներ, ինչպես նաև ներմուծման և արտահանման գների ամփոփ ինդեքսներ «Ըստ ԱՊՀ երկրների», «Ըստ ոչ ԱՊՀ երկրների» և «Ըստ Եվրամիության երկրների» հետևյալ բանաձևով՝ արժեքների ինդեքսներ, ինչպես նաև

$$I_E = \frac{\sum_{i=1}^n \frac{\overline{P_{it}}}{\overline{P_{io}}} * W_{io}}{\sum_{i=1}^n W_{io}}$$

որտեղ՝
I_E-յուրաքանչյուր ապրանքային ենթախմբի միջին արժեքի ինդեքսն է,
P_{it}-i-րդ ապրանքի բազիսային միջին արժեքն (գինն) է,
P_{io}-i-րդ ապրանքի միջին արժեքն (գինն) է ընթացիկ ամսում,
W_{io}-i-րդ ապրանքի տեսակարար կշիռն է բազիսային ժամանակաշրջանում:

Հաշվարկված արտաքին առևտրի միջին արժեքի ինդեքսների շարքը կարող է լինել խիստ անկանոն ի հաշիվ առանձին ապրանքատեսակների գների կտրուկ տատանումների: Նման կարգի գնային մեծ շեղումներից խուսափելու համար օգտագործվում է ինդեքսների շարքի վերին և ստորին թույլատրելի սահմանների հարթեցման մեթոդը՝ սահմանային գործակիցների կիրառմամբ: Ինդեքսի սահմանային արժեքները հաստատվում են այնպես, որ ապահովեն գնային փոփոխության ճշգրտության անհրաժեշտ մակարդակը՝ բացառելով անհամատեղելի տվյալները և հնարավոր սխալները: Ինդեքսի թույլատրելի վերին և ստորին սահմանները որոշվում են առանձին ապրանքատեսակների գների միջին կշռված քառակուսային շեղումների և դրանց վրա հաշվարկված տատանման (վարիացիոն) գործակիցների օգնությամբ (միջոցով): Արտաքին առևտրի գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը համապատասխանում է միջազգային չափանիշներին: Այն մշակելիս հաշվի են առնվել ԱՄՀ կողմից արված առաջարկությունները, միջազգային փորձը և համարվում է վերոհիշյալի կողմից առաջարկված նախապատվելի տարբերակներից մեկը:

Միջազգային համադրումներ

Սույն հրապարակումը ներառում է 2014թ. տվյալներով միջազգային համադրումների ԱՊՀ երկրների շրջանակներում տարադրամի գնողունակության համարժեքության (ԳՀ) հիման վրա հաշվարկված համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ-ի) միջազգային

summery indexes “by CIS countries” and “by non CIS countries” and “by EU countries” are calculated based on the indexes of commodity subgroups by the following formula:

$$I_E = \frac{\sum_{i=1}^n \frac{\overline{P_{it}}}{\overline{P_{io}}} * W_{io}}{\sum_{i=1}^n W_{io}}$$

where
I_E - average value index of each commodity subgroup
P_{it} - average value (price) of commodity in current month,
P_{io} - average bases value (price) of the ith commodity,
W_{io} - specific weight of the ith commodity in base period.
Series of the calculated foreign trade average value indexes could be strictly irregular due to sharp fluctuations of prices of some commodity items. In order to avoid such big price deviations, leveling method of upper and lower permissible margins of indexes series is used through applying marginal coefficient. The marginal values of indexes determined to enable to ensure the necessary precession ratio of price change, excluding incomparable data and possible errors. Upper and lower permissible margins of index are determined through the mean square deviation of prices of some commodity items and variation ratios calculated based on them.
Methodology of foreign trade price index calculation corresponds to the international standards, follows the IMF recommendations and international experience and is considered one of the preferable versions recommended by IMF.

The International Comparison Program

This publication contains main results of the international comparisons of gross domestic product (GDP) on the basis of purchasing power parity (PPP) of international comparisons using data for 2014.
Purchasing power parity is a ratio between

ԳՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
PRICE STATISTICS METODOLOGY

համադրումների հիմնական արդյունքները¹:

Տարադրամի գնողունակության համարժեքությունը (ԳՀ) համեմատվող տնտեսությունների գներով և տարադրամներով հաշվարկված համադրվող ապրանքների և ծառայությունների հավասարակազմի արժեքի հավասարության հիման վրա որոշված տարադրամների հարաբերակցությունն է:

ԳՀ-ն տարադրամների հարաբերակցությունն է և նախատեսված է տարբեր երկրների տնտեսությունների իրական ծավալների համադրումների համար՝ որպես հաշվարկային փոխարժեքների այլընտրանք: Տարադրամի գնողունակության համարժեքությունն իրենից ներկայացնում է միջազգային համադրումների կարևորագույն գործիք: Այն թույլ է տալիս ազգային ցուցանիշները բերել միասնական չափման: ԳՀ-ն լայնորեն կիրառվում է ինչպես հետազոտողների կողմից՝ վերլուծական նպատակներով, այնպես էլ առաջատար միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ-ի, ԱՄՀ-ի, Եվրամիության և այլն) կողմից կատարվող երկրների անդամավճարների և քվոտաների պաշտոնական հաշվարկների ժամանակ և այլն: ԳՀ-ն իր նշանակությամբ ուղղակի ազդեցություն է թողնում այն գումարի չափի վրա, որը երկիրը պարտավոր է վճարել միջազգային կազմակերպություններին, կամ կարող է ակնկալել այն ստանալ ընդհանուր բյուջեի շրջանակներում:

Ի տարբերություն տարադրամի փոխարժեքի, տարադրամի գնողունակության համարժեքությունը թույլ է տալիս արտացոլել տարբեր երկրների տնտեսական զարգացման մակարդակների իրական հարաբերակցությունը, իրենից ներկայացնում է ընդհանրական (ունիվերսալ) գործիք՝ տնտեսությունների մասշտաբների համադրման գործում ազգային տվյալների միասնական չափանիշի բերման համար:

Միջազգային համադրումների ծրագիրը (ՄՀԾ)՝ ԳՀ-ի հիման վրա խոշորագույն միջազգային նախագիծ է, ինչը համախմբում է աշխարհի գրեթե բոլոր երկրների վիճակագրական ծառայությունները:

ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի որոշման համաձայն, աշխատանքների գլոբալ համակարգող է հանդիսանում Համաշխարհային բանկը:

currencies which equates the cost of a comparable basket of goods and services in different countries priced in local currencies.

PPP is an alternative to an exchange rate of currencies that is used for comparing volumes of economies in different countries.

Purchasing power parity is a very important tool of international comparisons. It makes possible to express national indicators using estimates to common unit of measurement. PPPs are widely used by researchers for analytical purposes and by leading international organizations (UN, IMF, EU, etc.) for official calculations of country fees, quotas, etc. PPPs estimates have a direct impact on both the sums that countries have to pay to the international organizations and the sums they may request from the general budget.

The International Comparison Program (ICP) on the basis of PPPs is a very large international project having the participation of national statistical offices of almost all the countries of the world. The implementation of this program provides important information on the economies of the world and its main regions. The successful implementation of ICP relies on close cooperation between national statistical offices and international organizations.

Upon agreement with UN, the World Bank was responsible for the general coordination of the work.

The calculation of PPP is implemented jointly

¹ “Международные сопоставления ВВП на основе паритета покупательной способности валют по данным за 2014г.”, վիճակագրական ժողովածու, ԱՊՀ վիճկումիտե, 2017թ., <http://www.cisstat.org>, 2014 International comparison of CIS countries GDP based on purchasing power parities, Interstate Statistical Committee of the Commonwealth of Independent States, 2017, <http://www.cisstat.org>.

ԳՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
PRICE STATISTICS METHODOLOGY

ԳՀ-ի հաշվարկն իրականացվում է երկրների ազգային վիճակագրական ծառայությունների հետ համատեղ և ներառում է աշխատանքների մեծ ծավալ, այդ թվում, ապրանք-ներկայացուցիչների ցանկերի նախապատրաստում և համաձայնեցում, գների դիտարկում, դրանց ստուգում ու համաձայնեցում, սեփական հաշվարկների կատարում: Աշխատանքների ողջ ընթացքը, որպես կանոն, տևում է երեք տարուց ոչ պակաս և կոչվում է «համադրումների փուլ»:

Հաշվի առնելով տարադրամի գնողունակության համարժեքության կարևորագույն նշանակությունն ազգային տնտեսությունների համադրման գործում, ՀՆԱ-ի միջազգային համադրումները, գնողունակության համարժեքության հիման վրա, ԱՊՀ երկրների տարածաշրջանում իրականացվում են կանոնավոր հիմունքներով: ԱՊՀ ղեկավար մարմինների որոշումների համաձայն ԱՊՀ վիճակագրական կոմիտեն հանդիսանում է տարածաշրջանային կազմակերպություն, որը օժանդակում է այդ աշխատանքներին:

2014թ. ԱՊՀ տարածաշրջանի միջազգային համադրումների ծրագրում մասնակցել են Հայաստանը, Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանը, Մոլդովան, Ռուսաստանը, Տաջիկստանը և Ադրբեջանը:

with the countries' National Statistical Services and requires a great volume of work, including the preparation and harmonization of lists of commodities, prices observation, checking and harmonization, implementation of own calculations. The whole process of work, as a rule, takes at least three years and is called "comparisons stage".

Keeping in mind the importance of purchasing power parity to the comparisons of nationaleconomies, international comparisons of GDP on the basis of PPPs are conducted regularly in the CIS region. In compliance with the decisions of the governing bodies of the Commonwealth of Independent States the CIS Statistical Committee acts as the regional organization supporting this work.

The following countries participated in the International Comparison Program for the CIS region for benchmark year 2014 (CIS ICP 2014): Armenia, Belarus, Kazakhstan, Kyrgyzstan, Moldova, Russia, Tajikistan and Azerbaijan.